

## Ի գիտություն Լրագրություն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսեցիների

Հայ օգնության Ֆոնդը (ՀՕՖ)-ը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանակավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի լրագրության բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների համար հայտարարում է «Էսթեր Աճեմյան կրթավճար» ծրագրի մրցույթ, որի արդյունքում 5 հաղթողների ուսման վարձը կվճարի ՀՕՖ-ը՝ ամերիկայն բարերար Մարգարիտ Աճեմյանի կողմից հատկացրած միջոցներից:

### Մրցույթին կարող են մասնակցել այն ուսանողները , ովքեր՝

- ընդունվել են վերոհիշյալ ԲՈՒՀ-ի լրագրության ֆակուլտետի մագիստրատուրա
- ունեցել են բարձր առաջադիմություն բակալավրի ծրագրերով սովորելու տարիներին
- սոցիալապես անապահով ընտանիքներից են
- ուսման ավարտից հետո նվազագույնը 4 տարի պատրաստ են ապրելու և աշխատելու Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախում:

### «Էսթեր Աճեմյան կրթավճար» ծրագրի մրցույթին մասնակցելու կարգը

Վերոհիշյալ պայմաններին համապատասխանող ուսանողները ցանկության դեպքում կարող են մինչև **2016թ. օգոստոսի 20-ը**ներառյալ ք. Երևան, Մովսես Խորենացի 22 հասցեում գտնվող ՀՕՖ-ի Հայաստանի գրասենյակ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում (ծևը կարող էք վերցնել ՀՕՖ – ից և նշված բուհի դեկանատից)
- բակալավրի աստիճանի դիպլոմի պատճեն ու հավելվածը
- տեղեկանք ծնողների աշխատավայրից նրանց պաշտոնի և աշխատավարձի չափի վերաբերյալ, եթե չեն աշխատում՝ տեղեկանք զբաղվածության տարածքային կենտրոնից կամ աշխատանքային գրքույկի պատճեն
- հիմնավորում՝ հակիրճ ներկայացնել Ձեր կենսագրությունը, Ձեր ունեցած հաջողությունները, ինչու եք ընտրել տվյալ մասնագիտությունը և ինչպես եք կիրառելու ստացված գիտելիքները ապագայում, նշել նաև քաղաքացիական մասնակցության, գիտական աշխատանքներում ներգրավվածության մասին (1 համակարգչային էջի սահմաններում)
- լրագրողական նյութեր (հոդվածներ, ռեպորտաժների նյութեր, ծայներիզներ, տեսաերիզներ)
- ժուռնալիստիկան թեստ (կհանձնվի ՀՕՖ-ի գրասենյակում, ժամկետների մասին դիմումատուները կտեղեկացվեն լրացուցիչ)

### Ուշադրություն

Թերի փաթեթները չեն դիտարկվում, ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում:

Ընտրությունը տեղի է ունենալու 3 փուլով.

- Փաստաթղթային փաթեթի քննարկում
- Հարցազրույց
- Տնայց՝ անհրաժեշտության դեպքում

Սույն ծրագրում ուսանողի ընգրկման վերջնական որոշումը կայացնելու է ՀՕՖ – ի կրթական ծրագրերի հանձնաժողովը, որից հետո ուսանողի և ՀՕՖ- ի միջև կկնքվի պայմանագիր: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել +374 60 52 66 60 հեռախոսահամարով` Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ: